ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/82

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665)

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ

Կ. Խաչունցի (լիազորագիր տրված՝ 04.10.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված և 27.10.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/82 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 26.10.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն «Ատամնաբուժական նյութերի և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 7 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ատամնաբուժական նյութեր և պարագաներ (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի աղյուսակներից հետո Պատվիրատուի կողմից պահանջվող բոլոր ապրանքների համար սահմանված են մի քանի լրացուցիչ պահանջներ, որոնցից թիվ 1-ում առկա է նաև Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքներին վերաբերվող հետևյալ պահանջը՝ «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար' Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները»: (կից փաստաթուղթ թիվ 3):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» մրցույթի թիվ 1-ից 6-րդ մասերով պահանջվող ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու և ՀՀ տարածքում վաճառելու համար ՀՀ Օրենսդրությամբ սահմանված նման պահանջ գոյություն չունի, ինչը նշանակում է, որ Պատվիրատուի այդ պահանջը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ Օրենսդրությանը, այլև այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթի թիվ 1-ից 6-րդ չափաբաժիններին, դրանով իսկ արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ տվյալ մրցույթի թիվ 1-ից 6- րդ չափաբաժինների մասերով:

Պատվիրատուի կողմից ՀՀ Օրենսդրությանը չհամապատասխանող այդ խտրական պահանջը նաև անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը «ՀՀ ՊՆ- ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնման գործընթացին՝ մրցույթի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերոգրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը տվյալ մրցույթի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21- 9/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Ատամնաբուժական նյութերի և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի աղյուսակներից հետո Պատվիրատուի կողմից ձեռք բերվող թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով ապրանքների համար սահմանված՝ «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում

և/կամ ԱՄՆ- ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները»: պահանջը՝

ա) խտրական է և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու իր օրենսդրական սկզբունքը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի սահմանումներին:

բ) անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

գ) հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.10.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

Այնուհետև՝ 02.11.2021թ. ներկայացված բողոքի լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «ԳԲՔԱ-ԳՆ-2021/82» բողոքի և ի պատասխան ՀՀ ՊՆ-ի կողմից Ձեզ առաքված գրության մեջ արտահայտված ձևակերպումների և նշումների (որոնք այստեղ մեջբերված են չակերտների մեջ, հաստ շրիֆտով) հայտնում եմ հետևյալը՝

1) «ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջի առկայությունը Պատվիրատուն փորձում է հիմնավորել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սահմանումներով՝ «… (..գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.)…..» , որը ոչ մի

առընչություն չունի «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի հետ, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը վերաբերվում է ոչ թե գնման առարկաների տեխնիկական բնութագրերին, որոնք առկա են Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական բնութագրեր» սյունակներում՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների մասերով, այլ բողոքարկվում է Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա թիվ 1 պահանջը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների մասերով, որը վերաբերվում է ինչ-որ երկրներում առկա ինչ-որ գրանցման հավաստագրերի, որոնց մասերով այս պահին ՀՀ-ում գործող և ո՛չ մի իրավական ակտերում և ո՛չ մի պահանջ չկա, այլապես Պատվիրատուն դրանք կներկայացներ:

2) Պատվիրատուի այն նշումը, թե՝ <<… Նշված պահանջը նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով, …>>, նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի հայտարարված շատ մրցույթներում նման պահանջ առկա չէ: Եթե հիմք ընդունենք ՀՀ ՊՆ-ի գրության վերոգրյալ արտահայտությունը, ապա դա կարող է ունենալ երկու նշանակություն՝

ա) «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող պահանջ չպարունակող այդ մրցույթների հաղթողների հետ մատակարարման պայմանագրեր կնքելով՝ ՀՀ ՊՆ-ն վստահ է եղել, որ նրանց կողմից մատակարարվելիք՝ սակայն գրանցման հավաստագրերը չունեցող, ապրանքները կարող են «… պատվիրատուին ապահովել որակյալ և անտանգ ապրանքներով, …»:

բ) ՀՀ ՊՆ-ն՝ որպես ՀՀ խոշորագույն Պատվիրատու, թույլ է տալիս, որ իրեն ապահովեն գրանցման հավաստագրեր չունեցող՝ ոչ որակյալ և վտանգավոր ապրանքներով:

3) Պատվիրատուի այն նշումը, թե՝ «… Նշված պահանջը … չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում բոլոր հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը …», նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ՝

ա) «Խաչպար» ՍՊԸ-ն 2016–2019 թթ. հնարավորություն է ունեցել մասնակցելու միայն այն մրցույթներին, որտեղ առկա չի եղել բողոքարկվող պահանջը, որոնցում «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ի հաղթող է ճանաչվել մի շարք չափաբաժինների մասերով, ՀՀ ՊՆ-ին է

մատակարարել բողոքարկվող պահանջվով նախատեսված հավաստագրեր չունեցող՝ թվով 927 692 միավոր տարբեր տեսակների հետևյալ ապրանքները (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-4), որոնց որակի և վտանգավորության մասին Պատվիրատուի և ո՛չ մի ստորաբաժանման կողմից կողմից և ո՛չ մի անգամ և ո՛չ մի դժգոհություն չի արտահայտվել:

բ) «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող «ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել ընդամենը մեկ մասնակից, այն էլ միայն երկու չափաբաժինների մասերով (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2), այն դեպքում, երբ ներկա պահին ՀՀ-ում գործում են նմանատիպ ապրանքներ ներմուծող մեկ տասնյակից ավելի ընկերություններ, որոնց թվում է նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

գ) «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող պահանջը պարունակող՝ թվով 4, մրցույթներում պահանջվող չափաբաժինների մասերով մրցույթների մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները եղել են ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ (0-ական և 1-ական առաջարկ ունեցողներ) չափաբաժինների մասերով կազմում են 88,1 –ից մինչև 100 տոկոս, իսկ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ (2 և ավելի առաջարկ ունեցողներ) եղած չափաբաժինների մասերով կազմում են ընդամենը 0 –ից մինչև 11,8 տոկոս այն դեպքում, երբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող պահանջը չպարունակող միակ «ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23» մրցույթում պահանջվող չափաբաժինների մասերով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ (0-ական և 1-ական առաջարկ ունեցողներ) չափաբաժինների մասերով կազմում են ընդամենը 44,1 տոկոս, այսինքն՝ 2 և ավելի անգամ պակաս են, քան բողոքարկվող պահանջը պարունակող մրցույթներում, իսկ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ (2 և ավելի առաջարկ ունեցողներ) չափաբաժինների մասերով կազմում են արդեն 52,9 տոկոս, այսինքն՝ 5-ից մինչև 10 անգամ ավելի են, քան «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող պահանջը պարունակող մրցույթներում (ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 3):

4) Պատվիրատուի այն նշումը, թե՝ «... թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող է գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե ապահովում է տվյալ երկրների ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշները...», նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ բողոքարկվող մրցույթի Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ տարածք է ներմուծում և նրանց վաճառքը ՀՀ տարածքում իրականացնում է ՀՀ-ում

գործող իրավական ակտերի նորմերին և պահանջներին համապատասխան, որոնց նկատմամբ հսկողությունը իրականացվում է ՀՀ պատկան մարմինների՝ ՀՀ ՊԵԿ մաքսային և հարկային ծառայությունների կողմից, գտնվում է նրանց անմիջական և մշտական հսկողության տակ, այսինքն՝ այդ ապրանքների որակական ցուցանիշները բավարարում են տվյալ պահին ՀՀ-ում գործող իրավական ակտերով սահմանված նորմերին, պահանջներին և ստանդարտներին:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող «ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնման ընթացակարգով Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ձեռք են բերվում ՀՀ-ի, այլ ոչ թե Եվրամիության և/կամ ԱՄՆ-ի և/կամ Ճապոնիայի ՊՆ-երի համար, որպեսզի բավարարեն ոչ թե ՀՀ-ում գործող, այլ այդ երկրներում գործող իրավական ակտերով սահմանված նորմերին, պահանջներին և ստանդարտներին:

5) Պատվիրատուի այն նշումը, թե՝ «…Հայաստանի Հանրապետությունը՝ Բժշկական նշանակության ապրանքների պարտադիր գրանցման դաշտ պետք է անցնի 2022թ. հունվարի 1-ից:» միգուցե համապատասխանում է իրականությանը, սակայն ստիպված եմ Պատվիրատուին հիշեցնել, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է ոչ 2022թ. հոկտեմբերի 4-ին, այլ 2021թ. հոկտեմբերի 4--ին, երբ որ ՀՀ-ն դեռևս չի անցել «բժշկական նշանակության ապրանքների պարտադիր գրանցման դաշտ», այսինքն՝ Պատվիրատուն ինքն է փաստում, որ 2021թ. հոկտեմբերի 4-ի դրությամբ նման պահանջով ոչ մի իրավական ակտ չի գործում ՀՀ-ում:

Հարգելի պարոն Գ. Ներսիսյան:

«ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնման ընթացակարգով Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող, «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացրել և հավասար պայմաններ չի ապահովել «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցության համար այդ մրցույթի գնման գործընթացին՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ

չափաբաժինների մասերով, հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին, անհիմն կերպով բարդացրել է և սահմանափակել է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը այդ մրցույթի գնման գործընթացին՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, որոնց արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն չի ունեցել հնարավորություն՝ իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու իր հավասար իրավունքը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, ինչն ամրագրված է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածով:

Ելնելով վերոգրյալներից, «Խաչպար» ՍՊԸ-ն պնդում է իր պահանջը և ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Ատամնաբուժական նյութերի և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով»:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.11.2021թ. թիվ ՊՆ/02/5903-2021 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Խաչպար» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ (ծածկագիր՝ ԳԲՔԱ-

ՆԳ-2021/82, 26.10.2021թ.) հայտնում եմ հետևյալը.

Հիմք ընդունելով և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները (..գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.) հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ով սահմանվել է «1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր: Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը: Նշված պահանջը նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով, չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում բոլոր հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը քանի որ, ինչպես արդեն նշվել է, թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող է գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե ապահովում է տվյալ երկրների ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշները: Հետևաբար վերոհիշյալ պահանջը չի հանգեցնում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից նշված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի խախտմանը (.. Գնման առարկայի բնութագրերը՝ 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը...):

Բացի այդ, համաձայն ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովի խորհրդի 12.02.2016թ. №46 որոշման և անդամ պետությունների միջև ստորագրված համաձայնագրի Հայաստանի Հանրապետությունը՝ լինելով ԵԱՏՄ անդամ պետություն, բժշկական նշանակության ապրանքների պարտադիր գրանցման դաշտ պետք է անցնի 2022թ. հունվարի 1-ից: Սակայն ներկա պահին ՀՀ-ում նշված ապրանքների պարտադիր գրանցման պահանջի բացակայության փաստը դեռ չի նշանակում, որ Պատվիրատուն չի կարող պահանջել ԵԱՏՄ և/կամ ԵՄ շուրջ 35 առաջավոր և զարգացած երկրներում գրանցված և որակը հավաստող փաստաթղթեր ունեցող բժշկական պարագաներ, մանավանդ, որ այդ պահանջը չի հակասում որևէ օրենքին և գործող իրավական ակտերին: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված երկրներում ապրանքների գրանցված լինելու պահանջը չի ենթադրում որևէ երկրում

արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, և ցանկացած երկրի՝ ցանկացած արտադրող անմիջականորեն կամ իր ներկայացուցչի միջոցով հնարավորություն ունի իր արտադրված ապրանքատեսակը գրանցել նշված երկրներում:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊ ընկերության՝ բողոքով ներկայացված պահանջը անհիմն է, իսկ բողոքը ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.10.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը. «Ապրանքները պետք է ունենան 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.11.2021թ. թիվ ՊՆ/02/5903-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. ***<u>Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի</u>, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ <u>հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի</u>***

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ ***գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:***

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը. «Ապրանքները պետք է ունենան 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքով պնդել է, որ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» հրավերով սահմանված պահանջը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ Օրենսդրությանը, այլև այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթի թիվ 1-ից 6-րդ չափաբաժիններին, դրանով իսկ արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝

իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ տվյալ մրցույթի թիվ 1-6-րդ չափաբաժինների մասերով:

Ի պատասխան Ընկերության պնդմանը՝ Պատվիրատուն հայտնել է, որ նման պահանջը նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով, չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում բոլոր հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը քանի որ, ինչպես արդեն նշվել է, թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող է գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե ապահովում է տվյալ երկրների ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշները: Հետևաբար վերոհիշյալ պահանջը չի հանգեցնում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից նշված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի խախտմանը (.. Գնման առարկայի բնութագրերը՝ 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը...):

Այս տեսանկյունից արձանագրում եմ, հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ՝ ելնելով

գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ընդ որում՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի Օրենքի 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործի քննությամբ ներկայացված փաստարկները, գտնում եմ, որ «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի առկայության (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ Պատվիրատուի կողմից, թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով վկայակոչված տեխնիկական բնութագրի մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից որևէ մեկի խախտում:

Միևնույն ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ն 02.11.2021թ. ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/40» մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջի առկայությունը Պատվիրատուն փորձում է հիմնավորել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-

րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սահմանումներով՝ «… (..գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.)…..» , ***<u>որը ոչ մի առընչություն չունի «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի հետ, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը վերաբերվում է ոչ թե գնման առարկաների տեխնիկական բնութագրերին, որոնք առկա են Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական բնութագրեր» սյունակներում՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների մասերով, այլ բողոքարկվում է Հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա թիվ 1 պահանջը՝ Հրավերի թիվ 1-ից 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների մասերով</u>***,(…)»:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ը հանդիսանում է Տեխնիկական բնութագիր, հետևաբար՝ Հավելված 1-ում ներառված ցանկացած կետ և պահանջ ըստ էության հանդիսանում է Տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս, բացի այդ՝ Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք վկայակոչելով Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, ինքնին հակասել է իր իսկ կողմից բողոքով սույն մասով ներկայացված փաստարկին:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս տալ գնահատական՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում ներառված գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանում են Պատվիրատուի կարիքին, թե՞ ոչ:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ